Կատարող՝ Արմինե Բաղդասյան
Հեռ. 011 910-435

02.08.18թ.
№ 034/37297-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

01.08.18թ. N 14/22.2/10469-18

Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բարխուդարյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հուլիսի 26-ի թիվ 15/15.11/20818-18
գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016
թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում
բեռի ներմուծման մասին (N1) («Հայկական ակնաբուժության նախագիծ»
բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ
առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
31.07.2018

VERIFIED OCSP 31.07.2018 16:31:44 GMT+4

Signed by: HARUTYUNYAN HARUTYUN 3809760218

Կատարող՝ Մարինե Հարությունյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 1421

01.08.18թ.
№ 020/36603-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

3/11.48

«30» հունիս 2018թ.
No 06/3-8/43240-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԵՆՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 26.07.2018թ.
թիվ 15/15.11/20818-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի
8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման
մասին N 1 («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

7/27/2018

X

VERIFIED OCSP 7/27/2018 19:50:12 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

30. 07. 18թ.
№ 044/36104-18

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

3/11.50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
----- 2018 հուլիսի թվականի N Մ-
քաղ. երևան - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N2)
«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական
հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2018 թվականի օգոստոսի -ի N 1/14-2/-18, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության 2018 թվականի օգոստոսի -ի N /22.2/-18 ու
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի -ի N 06/3-8/-
18 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բա-
րեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախա-
գիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական
սարքավորումներ, 6 տեղ, 603 կգ ընդհանուր քաշով, 13,590 ԱՄՆ-ի դոլարին համարժեք
դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 750 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան»
մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բա-րեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016
թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրա-կանացվող «Լոյս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի
մասին» N Մ-267-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի
20-ի N Մ-498-Ա որոշման խմբագրու-թյամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

16.08.18թ.

N^o 1/14-2/14810-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
09.08.2018թ. N 15/15.11/24149-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N2) («Հայկական
ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

8/16/2018

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.08.18թ.

N^o 034/41323-18



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03

Էլ. փոստ՝ info@moh.am

14.08.18թ. N 14/22.2/11431-18
Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա.ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բարխուդարյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի օգոստոսի 9-ի թիվ 15/15.11/24149-18
գրության՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N2)
(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ առողջապահության նախարարությունը
իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
13.08.2018

X

VERIFIED OCSP 13.08.2018 18:05:47 GMT+4

Signed by: HARUTYUNYAN HARUTYUN 3809760218

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

14.08.18թ.

N^o 020/40362-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

2/11.50

«13» օգոստոս 2018թ.

No 06/3-8/46458-18

Ի պատասխան Ձեր 09.08.2018թ.
թիվ 15/15.11/24149-18 գրության

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բարխուդարյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-
ի NУ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին
(N2) («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)»
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

8/11/2018

X

VERIFIED OCSP 8/11/2018 17:16:46 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

13.08.18թ.

N^o 044/39830-18

Ն Ա Մ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018 օգոստոսի թվականի N Մ-
բաղ. երևան - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N3)
(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական
հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2018 թվականի օգոստոսի -ի N 1/14-2/ -18, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության 2018 թվականի օգոստոսի -ի N /22.2/ -18 ու
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի -ի N 06/3-8/
-18 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բա-
րեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախա-
գիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (աչքի շարժական
հիվանդանոցի ավտոկլավի համար նախատեսված մասեր, 1 տեղ, 5.4 կգ ընդհանուր
քաշով, 997.83 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման
ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բա-րեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ»
բարեգործական հիմնադրամի կողմից իրա-կանացվող «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ
փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2018
թվականի հունիսի 20-ի N Մ-498-Ա որոշման խմբագրու-թյամբ) հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 305, ֆաքս՝ (+374 60) 700 050
Վեբ կայք՝ www.minfin.am

14.08.18թ. № 1/14-2/14859-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
10.08.2018թ. N 15/15.11/24388-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N3) («Հայկական
ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

8/16/2018

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

17.08.18թ
№ 034/41644-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03
Էլ. փոստ՝ info@moh.am

16.08.18թ. N 84/22.2/11668-18
Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա.ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բարխուդարյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի օգոստոսի 10-ի թիվ 15/15.11/24388-18
գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016
թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում
բեռի ներմուծման մասին (N3) («Հայկական ակնաբուժության նախագիծ»
բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ
առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
16.08.2018

X

VERIFIED OCSP 16.08.2018 17:20:27 GMT+4

Signed by: HARUTYUNYAN HARUTYUN 3809760218

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

16.08.18թ
№ 020/41583-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 14 » օգոստոս 2018թ.
No 06/3-8/46419-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 10.08.2018թ.
թիվ 15/15.11/24388-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի
8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման
մասին N 3 («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)»
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

8/13/2018

X

VERIFIED OCSP 8/13/2018 21:03:16 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

14. 08. 18թ
№ 044/40366-18

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2018 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի -ի N 01.1/14-2/-18, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի հունիսի -ի N
01.1/14-2/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի -ի N06/3-8/-18 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից ձեռք բերված, «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի միջոցով, ստացված
կաթնախառնուրդն ու կաթնազերծ խառնուրդն (831 տեղ, 2,915 կգ ընդհանուր քաշով,
24,818.95 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 700 եվրո
փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական
ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին
իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մեյիք-Աղայան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.01/14-2/11813-18

28.06.18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
27.06.2018թ. N 15/15.2/12655-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Ս-1469-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ
ավետարանչական ընկերակցություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ
մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Արմինե Բաղանյան
Հեռ. 011 910-435

034/26461-18

28.06.18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03

էլ. փոստ info@moh.am

3.07 N 22.2/8585-18

Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 15/15.2/12655-18
գրության՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Ս-
1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին»
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն) որոշման նախագծի
վերաբերյալ հայտնում են, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր
իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

03.07.2018

X

VERIFIED OCSP 03.07.2018 11:28:05 GMT+4

Signed by: HARUTYUNYAN HARUTYUN 3809760218

Կատարող՝ Նաիրա Փափախյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

020/27576-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

8/11.52

«8» 04 2018թ.
No 0613-81/36944-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 27.06.2018թ.
թիվ 15/15.2/12655-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի
13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման
մասին» (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն) որոշման նախագծի
վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

7/2/2018

X

VERIFIED OCSP 7/2/2018 19:29:47 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067
Ս.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՀԿ, Ն. Բեժանյան
ՀՈՒ. 060544705

044/27358-18

8/11.53

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2018 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2018 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/ -18, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության 2018 թվականի հուլիսի -ի N ՀՀ/22.2/ -18 և Հայաստանի
Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի -ի -ի N 06/3-2/ -18
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Սահմանել, որ Շինաստանից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական
հասարակական կազմակերպության հասցեով ստացված բժշկական սարքը (1 տեղ, 12.25 կգ
ընդհանուր քաշով, 10,894 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, որից 580 ԱՄՆ-ի դոլար կազմում է
փոխադրման ծախսը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական
հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի
կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-
820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա և 2018 թվականի մարտի 17-ի N Մ-187-Ա
որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

02.08.18

04/14-2/13924-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
24.07.2018թ. N 15/15.2/19836-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի N Մ-259-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առողջ կյանքի ուղի»
բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ
հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

034/37248-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 60) 80 80 03

էլ. փոստ info@moh.am

30.07.18N ՀՀ/22.2/10373-18

Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բարխուդարյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հուլիսի 24-ի թիվ 15/15.2/19836-18
գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009
թվականի ապրիլի 23-ի N Մ- 259 -Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ) որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն
իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.07.2018

VERIFIED OCSP 28.07.2018 12:50:06 GMT+4

Signed by: HARUTYUNYAN HARUTYUN 3809760218

Կատարող՝ Մարինե Հարությունյան
Դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 1421

020/3614-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

3/11.53

«26» 07 2018 թ.

No 06/3-8/42507-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.07.2018թ.
թիվ 15/15.2/19836-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի
23-ի N Մ-259-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման
մասին («Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

7/25/2018

X

VERIFIED OCSP 7/25/2018 19:01:27 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

044/35094-18

3/11.54
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

օգոստոսի 2018 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2018 թվականի օգոստոսի -ի N և Հայաստանի Հանրապե-
տության կառավարության աղընթեր պետական եկամույների կոմիտեի 2018 թվականի
օգոստոսի -ի N եզրակացությունները, որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք.
երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելյուսի, Խորենացու
և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարիսպված այգու բարեկարգում և
հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշման (2018 թվականի մարտի 16-ի
N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,500,000,000 դրամ» բառերը փոխարինել «2,430,000,000
դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից
ծեղք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված
ծրագրի շրջանակներում՝

1) բնական գրանիտ՝ 590 քառ.մ., 21,830 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողու-
թյամբ, փոխադրման ծախսերը կազմում են 4,511,300 դրամ «Արարատյան» մաքսատուն-
վարչություն.

2) դրենաժային լուծույթ՝ 40 տ ընդհանուր քաշով, 186,000 ռուսական ռուբլուն հա-
մարժեք դրամ արժողությամբ, «ԵՏՄ» բեռ.

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե և Երևանի քաղաքապետարան:



2018.թ.

«Երևանի 2800 ախպակին նվիրված ք. Երևանի, Ա. Մյասնիկյանի արձանի երեսնամասում գտնվող Իսախանյի, Բելլուսի, Խոթրեանցու և Գ. Լուսավորչի փորձվածքի սահմաններում պատկանված առու բարեկարգված և իմնանորոգվան»

rwqhr

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության ք. Երևանի, Ա.Մյասնիկյանի արձանի ետևամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ.Լուսավորիչի փորոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և «պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից»:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	ք. Երևանի, Ա.Մյասնիկյանի արձանի ետևամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ.Լուսավորիչի փորոցների սահմաններում պարփակված այգի: Բնագավառը քաղաքաշինական:
6.	Ծրագրի բյուջեն	2 430 000 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևանի համայնք: Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունը ստացողի առկաության ինտրակոն:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի հունվարի 8-ից մինչև 2018թ.-ի դեկտեմբերի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Զբոսայգու նախագծում-30 000 000 դրամ /այդ թվում ավարտված 26 688' 807 դրամ աշխատանքներ/ Զբոսայգու շինարարական աշխատանքներ-1 100 000 000 դրամ /այդ թվում ավարտված 362 274 095 դրամի աշխատանքներ/ Զբոսայգու կանաչապատում 30 000 000 դրամ Շատրվանների կառուցում և վերանորոգում-900 000 000 Զբոսայգու կահավորում և այդ այգու համար նախատեսված պարագաների հազեցում-370 000 000 ՀՀ դրամ /այդ թվում ձեռք բերված 18 217 500 դրամի ապրանքներ/: Միջոցառումների ընդհանուր արժեքը կազմում է 2 430 000 000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2018թ.-ի հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է նախագծման ծառայությունների ձեռք բերում 30 000 000 ՀՀ դրամ, շինարարական աշխատանքների իրականացման համար ծառայությունների ձեռք բերում 1 100 000 000 ՀՀ դրամ, Զբոսայգու կանաչապատման ծառայությունների ձեռք բերում 30 000 000 ՀՀ դրամ: Շատրվանների համար սարքերի, սարքավորումների, պարագաների ձեռք բերում և ներմուծում-900 000 000: Այգու համար նախատեսված պարագաների ձեռք բերում և ներմուծում-370 000 000 ՀՀ դրամ: Ձեռք բերվող ծառայությունների ու ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 2 430 000 000 ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ	Չի նախատեսվում:

2/11/18

15.11.18

կազմակերպությունների հետ	
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից օրենքով սահմանված կարգով:

Կազմեց՝ Տնօրեն Ա.Ղազարյան

25.11.18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

02.08.18թ.
№ 01.1/14-2/14024-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
30.07.2018թ. N 15/15.11/21221-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշման մեջ
փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում
բեռների ներմուծման մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)»
որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

03.08.18թ.
№ 034/37472-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«01» օգոստոս 2018թ.
No 06/3-8/43893-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 30.07.2018թ.
թիվ 15/15.11/21221-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի
26-ի ՄՄ-068-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Վարդանյան
ընտանիք» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում
ենք:


Հաշվի առնելով որ, ծրագրի բյուջեի ավելացումը պայմանավորված է նոր
աշխատանքների կատարմամբ, ինչպես նաև ծառայությունների և ապրանքների
ծեռքերմամբ, անհրաժեշտ է ծրագրում տարանջատել մինչև 2018թ-ի օգոստոս ամիսը
ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված աշխատանքները, ձեռք բերված
(ներմուծված) ապրանքներն ու ծառայությունները՝ ըստ ծրագրի 9-րդ կետով
սահմանված ուղղությունների, միաժամանակ նշելով, որ հարկային արտոնություն
ակնկալվում է բյուջեի ավելացվող և համապատասխան մնացորդի մատով:

3/11.54

Ելնելով վերոգրյալից, վերը նշված ծրագրի փոփոխության բարեգործական որակումը հնարավոր ենք համարում փոփոխվող ծրագրի լրամշակված տարբերակը ներկայացնելուց հետո:

Հարգանքով՝

7/31/2018

X 

VERIFIED OCSP 7/31/2018 20:39:16 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

01.08.18թ
№ 044/36848-18

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ու նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ	Հիմնադրամը 2018 թվականի օգոստոսի 10-ի N 1-3-52 գրությամբ ներկայացրել է ծրագրի խմբագրված տարբերակը:
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.	
Հաշվի առնելով որ, ծրագրի բյուջեի ավելացումը պայմանավորված է նոր աշխատանքների կատարմամբ, ինչպես նաև ծառայությունների և ապրանքների ձեռքբերմամբ, անհրաժեշտ է ծրագրում տարանջատել մինչև 2018թ-ի օգոստոս ամիսը ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված աշխատանքները, ձեռք	

3/11.54

3/11.54

Ելից՝ 1-3-52
Ամ 10.08.2018թ.

3/11.54

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

«Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Ա.Ղազարյանից

Մեծարգո պարոն Տեր-Սիմոնյան,


«Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
«Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի, Ա.Սյունիկյանի արձանի ետնամասում
գտնվող Իտալիայի, Բելյուսի, Խորենացու և Գ.Լուսավորիչի փողոցների
սահմաններում պարփակված այգու բարեկարգման և հիմնանորոգման» ծրագիրը ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից
26.01.2018թ.-ի թիվ Ս-068-Ա որոշմամբ որակվել է բարեգործական:

Ի լրումն <<Վարդանյան Ընտանիք>> բարեգործական հիմնադրամի կողմից
03.08.2018թ.-ի գրության կից Ձեզ ենք ներկայացնում 02.08.2018թ.-ի ծրագրի
խմբագրված վերջնական տարբերակը և խնդրում ենք այն որակել բարեգործական:

Առդիր՝ 4 թերթ:

Կանխավ շնորհակալություն.

Հարգանքով՝



Ղազարյան

094-39779
10 08 18

1288

բերված (ներմուծված) աստիճաններն ու ծառայությունները՝ ըստ
ծրագրի 9-րդ կետով սահմանված ուղղությունների, միաժամանակ
նշելով, որ հարկային արտոնություն ակնկալվում է բյուջեի
ավելացվող և համապատասխան մնացորդի մասով:
Ելնելով վերոգրյալից, վերը նշված ծրագրի փոփոխության
բարեգործական որակումը հնարավոր ենք համարում փոփոխվող
ծրագրի լրանշակված տարբերակը ներկայացնելուց հետո:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

8/11.54

«13» Օգոստոս 2018թ.
No 06/3-8/46585-18

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԵՆՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 10.08.2018թ.
թիվ 1-3-53 գրության

Հարգելի պարոն Ղազարյան

Գրությանը կից ներկայացված՝ «Վարդանյան ընտանիք» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա.
Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելյուզի, Խորենացու և Գ.
Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգման և
հիմնանորոգման» ծրագրի խմբագրված տարբերակի վերաբերյալ լրացուցիչ
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

8/13/2018

X

VERIFIED OSCP 8/13/2018 11:35:17 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀ, Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

13.08.18թ.
№ 044/40084-18

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

8/12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— հուլիսի 2018 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հուլիսի -ի N 06/3-8/-18
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի
N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա,
հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա,
դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1160-Ա որոշումների
խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2018 թվականի հունիսի 15-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսապլանների և անձրևաջրերի
հեռացման ցանցի ու հանգույցների ձեռքբերում՝ 2,480,000 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 01.1/14-2/12646-18
12.07.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.07.2018թ. N 15/15.6/15748-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N-Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/30043-18
12.07.2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 11 » 07 2018 թ.

No 06/3-8/38620-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.07.2018թ.
թիվ 15/15.6/15748-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N-Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

X

VERIFIED OCSP 7/10/2018 18:33:05 GMT

Signed by: MANUKYAN ARTUR 3801690
Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿԱ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/29415-18
11.07.2018թ.

3/12.2
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ հուլիսի 2018 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հուլիսի -ի N 06/3-8/-18
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի
N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա,
հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա,
դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1160-Ա որոշումների
խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01818989) 2018 թվականի հունիսի 1-ին կնքված պայմա-
նագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջահերի վերանորոգման ծառայություն-
ների մատուցում՝ 350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 01.1/14-2/12609-18
12.07.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
09.07.2018թ. N 15/15.6/15727-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Տաշիր» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/29770-18
12.07.2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

3/12.2

«11» 07 2018թ.

No 06/3-8/38619-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.07.2018թ.
թիվ 15/15.6/15727-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի
փետրվարի 24-ի ՈՒ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի
մասին N1 («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

X

VERIFIED OCSP 7/10/2018 18:31:55 GMT

Signed by: MANUKYAN ARTUR 38016900
Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

044/29416-18
11.07.2018թ.

3/12.2
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

— հուլիսի 2018 թվականի N Մ — -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/18 և Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի 2018 թվականի հուլիսի -ի N 06/3-8/18 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի
N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա,
հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա,
դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1160-Ա որոշումների
խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2018 թվականի հուլիսի 4-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անձրևաջրերի հեռացման ցանցի
ծեղքներում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Կեք կայք՝ www.minfin.am

№ 01.1/14-2/13799-18
31.07.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
23.07.2018թ. N 15/15.6/19672-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N-U-126-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 («Տաշիր» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/36600-18
31.07.2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ

«25» 07 2018թ.

No 06/3-8/42173-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 23.07.2018թ.
թիվ 15/15.6/19672-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի
փետրվարի 24-ի NU-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի
մասին N2 («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

7/25/2018

X

VERIFIED OCSP 7/25/2018 09:21:40 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ փարչարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀԱՎՀ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/34528-18
25.07.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

8/12.4

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ հուլիսի 2018 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-437-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հուլիսի -ի N 06/3-8/-18
եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի երևանյան փողոցի կանաչապատում, ցան-
կապատների կառուցում և վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-437-Ա որոշմամբ հաստատ-
ված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գլոբալ քընսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06951956) 2018 թվականի հունիսի 1-ին
կնքված՝ N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական
աշխատանքների իրականացում՝ 30,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Կեք կայք՝ www.minfin.am

N 01.1/14-2/12658-18
12.07.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
09.07.2018թ. N 15/15.6/15749-18 գրության

Հարգելի պարոն Բարիստյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-ի N Մ-437-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ
առարկություններ չունենք, սակայն հաշվի առնելով, որ վերը նշված ծրագրի իրականացման
վերջնաժամկետը սահմանվել է 30.05.2019թ., իսկ «Տաշիր» ԲՀ-ի և «Գլոբալ քընսթրաքշն»
ՍՊԸ-ի միջև 12.06.2018թ. կնքված N 5 շինարարական կապալի պայմանագրի
գործողության ժամկետը սահմանվել է մինչև շինարարության ավարտը և այն անորոշ է,
ուստի առաջարկում ենք պայմանագրի գործողության վերջնաժամկետը սահմանել ծրագրի
վերջնաժամկետի օրը՝ մինչև 30.05.2019թ.-ը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

034/30045-18
12.07.2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«16» 07 2018թ.

No 06/3-8/39617-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ


Ի պատասխան Ձեր 09.07.2018թ.
թիվ 15/15.6/15749-18 գրության

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 08.06.2018թ-ի N Մ-437-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Որոշման նախագծի 1-ին կետի համաձայն, «Գլոբալ քընսթրաքշն» ՍՊԸ-ի հետ 12.06.2018թ-ին կնքված N5 պայմանագրով նախատեսվում է «Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի կանաչապատում, ցանկապատների կառուցում և վերանորոգում» ծրագրի շրջանակներում իրականացանել շինարարական աշխատանքներ՝ 51,600,000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, վերը նշված ծրագրի 10-րդ կետի համաձայն, ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ընդհանուր առմամբ 30,000,000 ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ:

